

ԷՏ. ՔԼԱՓԱՌԷՏ

ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ

ՏՂՈՑ ՄԷՋ

Թարգմանեց
Պ. ԳԵՈՐԳԵԱՆ



Տ ա ղ ա ի ր ա ը
Կ Ի Պ Է Ն Ի Ե Ա Ն

ՆԻԿՈՍԻԱ - ԿԻՊՐՈՍ

1949

22

THE UNIVERSITY OF CHICAGO

1908

1908

22

1908

Հրապարակ, 22/12/49

Ուսման համար

Թարգմանություն

493

ԷՏ. ՔԼԱՓԱՌԷՏ

371.398

ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ


ՏՂՈՑ ՄԷՋ

A 41762

Թարգմանեց
Պ. ԳԵՈՐԳԵԱՆ



Տպարան
ԿԷՊԷՆԼԵԱՆ
ՆԻԿՈՍԻԱ - ԿԻՊՐՈՍ
1949





1168-61

ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԴԱՅՈՒՄԸ ՏՂՈՑ ՄԷՁ (1)

Շատ կը խօսուի քանի մը տարիէ իվեր «ստորակայութեան զգացում»ի մասին: Պատճառը խնդրին նոր բան մը ըլլալը չէ. այլ՝ ասկէ առաջ յատկօրէն նշմարուած չէր, մասնաւանդ ըմբռնուած չէր թէ այդ զգացումը ի՞նչ դեր կ'ընար խաղալ անհատի մը ճակատագրին, անոր նկարագրին վճռուելուն, կո՞մ կարգ մը ջղային խանգարումներու երեւան գալուն մէջ:

Այս հարցը կարեւոր'ը հոգեբանութեան համար, նուազ կարեւոր չէ դաստիարակութեան արուեստին համար ալ: Անիկա ցոյց կու տայ մեզի որ դաստիարակին պատասխանատուութիւնները կարծուածէն շատ աւելի մեծ են. դաստիարակին գործած սխալները — ծանօթութեանց անբաւարարութեան հետեւանքով — կրնան անդարմանելիօրէն աղէտալի ըլլալ շատ մը տղոց իմացական և բարոյական կազմութեան համար:

Կարեւոր հարց անո՞ր համար նաև որ անհատին և ընկերութեան միջև յարաբերութեանց փափուկ խնդիրը կը յսկէ: Դաստիարակութիւնը, երբ իր ընկերային նպատակներուն տեսակէտէն նկատի առնուի, անհատը արուած ընկերային միջավայրի մը յարմարցնելու արուեստն է մեծ մասամբ. աւելին՝ խոհա՛ւ ընկերային միջավայրի մը՝ որուն պատրաստութեան անհատը ի՞նք ալ պարտաւոր պիտի ըլլայ աշխատելու: Բայց, անհատին տեսակէտէն, դաստիարակութիւնը — ըստ այն յանդուգն և միևնոյն ստեղծ խորիմաստ բանաձևին որ տղուն կենսաբանական ուսումնասիրութիւնէն կը բխի — դաստիարակութիւնը կեանք մըն է, ո՛չ թէ կեանքի պատրաստութիւն: (2)

(1) ED. CLAPARÈDE. Le Sentiment d'Infériorité chez l'Enfant. Cahiers de Pédagogie Expérimentale & de Psychologie de l'Enfant. No. 1. Institut des Sciences de l'Education, Genève, 1934.

(2) Բլափառէս — ինչպէս ինք կը մասնագէտ — այս գաղափարը ընդլայնած է իր *L'Education Fonctionnelle* գիրքին մէջ, 1931, էջ 236: Actualités Pédagogiques & Psychologiques. Delachaux & Niestlé. Neuchâtel & Paris.

Տղուէն իրաւունքները համաձայնեցնել չափահասին պահանջներուն հետ, անհատին իրաւունքները ասին իրաւունքներուն հետ որոնք ընկերութեան յատուկ են. անա՛ ինչ բանի մէջ կը կայանայ դատտիրարակին գերազոյն արուեստը: Բայց եթէ այդ արուեստը իր բարձր առաքելութեան համապատասխան չըլլայ, երկու կարգի իրաւունքներուն միջև բախում յառաջ կու գայ, ու ատկէ կը ծնի ստորակայութեան զգացումը, աղէտալի հետեւանքներու իր շքախումբով երբեմն:

Յետագայ էջերուն մէջ — հարկադրաբար հապճեպ և քիչ մը ուրուագծային — կարգաւ պիտի քննենք ստորակայութեան ըզգացումին պատճառները, հետեւանքները, դարմանումը:

ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ստորակայութեան զգացումը ծնունդ կ'առնէ տիրապետական ձգտումին ձախողանքէն: Հասկնալու համար թէ ուրկէ՞ կու գայ այս ձգտումը, սկիզբէ՛ն սկսինք, և նայինք թէ ի՞նչ է կեանքը:

Կեանքը ձգտում մը կ'ենթադրէ. եսին ինքնապահպանութեան ձգտումը: Ամէն ինչ որ խանգարէ գործարանաւորութեան ամբողջականութեան անհրաժեշտ հաւասարակշռութիւնը՝ ինքնապահպանութեան այդ ձգտումը կ'արթնցնէ: Կարելի է նոյնիսկ րսել որ կեանքը ուրիշ բան չէ բայց եթէ այս շարունակական վերահաստատումը ամէն վայրկեան խանգարուող հաւասարակշռութեան մը: Սակայն, մերինին պէս ընկերային միջավայրի մը մէջ, եսը չի կրնար ինքզինքը պահպանել առանց տիրապետական ձգտումի. որովհետեւ եսը պահպանել համարժէք է ամենայնա՛յն՝ յաղթանակ ապահովելու գոյութեան պայքարին մէջ:

Ե՛ս՝ նախ և առաջ: Տիրապետական այս ձգտումը կենդանիներո՛ւն մէջ կը տեսնենք յստակ կերպով, որովհետեւ զայն օտնաձող բարոյական խղճահարութիւններ չունին անոնք: Շունները, կատուները, թռչունները կը կռուին՝ ինչպէս գիտենք՝ փշրանք մը ուտելիքի համար. և յաղթականը իր աւարը առած կը փախչի վախնալով որ զայն ձեռքէն խլեն (1)

(1) Ինչպէս նորվեկիացի հոգեբան՝ Շյէլսուր - Լյպլէ Ի խիստ շահեկան գիտողութիւնները ցոյց տուած են, թռչունները, և ուրիշ կենդանիներ, իրենց միջև խիստ որոշ դասակարգային յարաբերութիւններ ունին: Այսպէս, հաւքակի մը մէջ իւրաքանչիւր հաւ «ըռնակալ»ն է ուրիշ հաւու մը որ պարտի իր առջև խոնարհիլ: Միւս կողմէ, ա. հաւ մը, որ «կը տիրապետէ»

Մարդկութեան ամբողջ պատմութիւնը տարբեր բան է տիրապետական այս ձգտումին ըստմանկերպ արտայայտութենէն։ Մարդը կը ջանայ տիրել ֆիզիքական աշխարհին՝ գիտութեան և ճարտարարուեստի միջոցաւ, ընկերային աշխարհին՝ ուժի միջոցաւ։ Ռադաքական պատմութիւնը ուրիշ բան չէ բաց եթէ պատմութիւնը բռնակալական և կայսերապաշտ փորձերու որոնց նպատակն է գոհացում տալ ամէն մարդու և ամէն ազգի ռիտին խորը պահուած գերակայութեան պահանջքին։ Կրօնից պատմութիւնը մեղի ցոյց կու տայ հաւատալիքներ տարածելու կամ զանոնք ուրիշ տեղեր ներմուծելու համար թափուած ճիգերը։ հաւատալիքներ՝ զորս եւր որդեգրած է և որոնք իր էութիւնը կը կազմեն կերպով մը։

Արդ, եսին ընդարձակման այս ձգտումը շատ աւելի զօրաւոր է տղուն մէջ քան չափահասին։ Ատոր պատճառը դժուար չէ նշմարել։ անման արդիւնքն իսկ է։ Աճումը մշտակայ պատճառ մըն է գործարանային հաւասարակշռութեան խանգարումի որ կու գայ միւս պատճառներուն վրայ կ'աւելնայ։ Մեծցող պզտիկը պէտք ունի — այն անուշիկէն զատ որ մարդկային մեքենային գործունէութենէն յառաջ եկած կորուստները դարմանելու սահմանուած է — բնախօսներու «ամման բաժին» կոչած անուշիկն։ այսինքն իր մարմնին մեծնալուն անհրաժեշտ յաւելուածակոն անուշիկ մը։ Արդ, ուոյն բանն է միտքին մեծնալուն համար ալ։ Տղան, եթէ յանդգնութիւն չէ ըսել, «աճումի տիրապետական ձգտում» մը ցոյց կու տայ, որ անհրաժեշտ կը թուի ձեռք բերելու համար իր իմացական կառուցումին պէտք եղած բոլոր փորձառութիւնները։ Այս խիստ յատկանշական ձգտումին շնորհիւ է որ տղան, հեռու գոհանալէ ճանչնալով աւոյն բաները լոկ որոնք պիտի բաւէին իր ներկայ պահանջներուն, կը փախաքի ընդհակառակը միշտ աւելին գիտնալ, կը հարցովփորձէ, կը փորձարկէ, ամէն բան ձեռքէ կ'անջընէ, ամէն բան կը խառնէ՝ անմիջական անհրաժեշտութեանց սահմանէն անդադար անդին անցնելով, ամէն վայրկեան ինքզինքէն վեր բարձրանալով, իր չահագրգռութեանց չըջանակը ընդարձակելով, իշխանութիւն բանեցնելով, աշխարհը նուա-

և բռնութիւն կը բանեցնէ ք։ հաւի մը վրայ, որ՝ իր կարգին՝ բռնակալն է գ. հաւի մը կրնայ ինք ալ(ա. հաւը) այս գ. հաւին տիրապետութեան տակ ըլլալ։ Ինչ որ կ'ապացուցանէ թէ անհատներու միջև յարաբերութիւնները կարեւոր չունին լոկ ֆիզիքական ուժէն(որովհետեւ այդ պարագային պէտք էր որ ա. ը անհրաժեշտօրէն գ. ին վրայ տիրապետէր), այլ նաև անհատական ազդակներէ։

ձեւում ելլելով...

Բայց, կեանքին առաջին օրերէն, աւա՛ղ, անյաղթելի խոչընդոտներ կ'ընդդիմանան եսին այս ընդարձակման, փափաքներու այս կոչին։ Արտաքին ուժեր կուգան ձախողութեան մատնելու այս բնական ձգտումները որոնք տղան կը մղէին իր ցանկութեանց գոհացման։ Նորընծան շուտ կ'անդրադառնայ որ արտաքին աշխարհը իրեն չի պատկանիր, թէ՛ չի կրնար լուսինը թեւերուն մէջ տանել, թէ՛ անջրպետին տէրը չէ և թէ՛ ա՛լ աւելի քիչ տէրն է իր շուրջը գտնուող անձերուն, որոնք շարունակ կ'ըսեն իրեն. «Այ մի՛ ըներ, ան մի՛ խառներ, լռէ՛, հանգա՛րտ կեցիր, պատուհանէն վար մի՛ կախուի, ջուրերու մէջէն մի՛ քալիր...»։ Անկողին կը դնեն զինքը՝ մինչդեռ խաղալ կ'ուզէ, կ'արթնցնեն՝ մինչ քուն ունի տակաւին։ Կ'ստիպեն որ ապուրը խմէ, զոր չի սիրել։ Կը զրկեն պտուղէ, զոր կը սիրէ։

Պզտիկը՝ առով՝ կը գիտակցի իր սկարութեան. որովհետեւ՝ չափահասին դէմ մղած պայքարին մէջ՝ յաղթուողը կ'ըլլայ միշտ։ Այս անխուսափելի ձախողանքէն է որ կը քաղէ իր ստորակայութեան զգացումը։ Այդ զգացումը բնական է ուրեմն ամէն տղու։ Ըստ ինքեան ցաւալի բան մը չկայ ստոր մէջ, ընդհակառակը փրկարար է — հոգ չէ թէ՛ վաղանցուկ լացերու պատճառ ըլլայ։ Ստորակայութեան զգացումը «մեծ ըլլալու» փափաքը կը խթանէ, «հայրիկին պէս» ընելու, երէցներուն նմանելու։ Անհամար խաղերու մղիչն է՝ որոնց մէջ տղան չափահասները եւ չափահասներուն ընթացքները կ'օրինակէ։ Ուստի «սղան ինքզինքը դաստիարակելու մղող միջոցներուն ամէնէն թանկագինն է»։ Ու կամաց կամաց կ'անհետանայ քանի՛ անհատականութիւնը կազմուի։

Դժբախտարար տառնիկ չ'ըլլար միշտ։ Զոհադան պատճառներ — զորս Էրեք խումբի պիտի բաժնեմ. ա) միջավայրի անպատաստ ազդեցութիւն, բ) իրական ստորակայութիւն, գ) անհեթեթ կամ ծիծաղելի անբնականոնութիւն — կրնան ստորակայութեան զգացումը զօրացնել, բուռնել, կսկծեցուցիչ փուշ է՝ որ պէս մխել զոյն տղուն բարոյական մարմնոյն մէջ։ Վէրք՝ որ անջնջելի հետք մը կը ձգէ այդ պարագային, զգայուն կէտ մը՝ որ ամբողջ կեանքի տեղդութեան կը մնայ, աղբիւրը կ'ըլլայ ինքնապաշտպանութեան ամենաաշխատան հակազդեցութեանց։

Ա. — Նախ տեսնենք միջավայրին ազդեցութիւնը։ Այս պա-

րագային, ստորակայութեան իսկողան «ընականն» զգացումը կը սաստկանայ շրջապատին պատճառաւ :

Ունայնամիտ ծնողքներ, օրինակի համար, ամչնալով հանճարեղ զաւակ մը չունենալուն, ամէն առթիւ կը բաղդատեն զայն օժտուած զարմիկի մը, փայլուն ընկերոջ մը հետ, և կը մեղադրեն որ չի կրնար անոնց մակարդակին հասնիլ : Կամ, երէց եղբայրներ սնդադար «մանկիկ» ի տեղ կը դնեն ընտանիքին կրթականը զանցառելի քանակութիւն նկատելով զայն : Եւսկա կը պատահի մանաւանդ (անգիտակից նախանձի հետեւանքով) : Եթէ կրտսերը իրենցմէ աւելի օժտուած ըլլայ, կամ երբ ուսուցիչ մը կ'շտամբէ աշակերտ մը պարտականութիւնը լու կատարած չըլլալուն համար, խայտառակէ զայն ամբողջ դասարանին առջեւ՝ մինչդեռ աշակերտը գիտէ թէ իր կարելին բոլորէ : Դասակարգումի դրութեան համաձայն այսինչ աշակերտը իր ընկերներուն վերջինը կը նկատուի, ինչ որ կը դառնացնէ զինքը ևւ տակաւ վատահոլութիւնը վերցնել կու տայ ինքզինքին վրայէն : (Ասկա ցոյց կուտայ — անդրադառնա՛նք անցողակի — թէ ո՛րքան փափուկ է դպրոցին մէջ բարի նախանձի հարցը) : Կայ նաև ուժով ընկերներու պարագան որոնք կը քամահրեն կամ կը տրեն տկարները :

Ա՛հ, դպրո՛ցը : Աքանջելի զէնք մը, անտարակոյս, յառաջդիմութեան ձեռքին մէջ : Խոյց երկսայրի՛ զէնք... Դպրոցական տարիները ի՛նչ դառնութեամբ կը թաթաւեն երբեմն անհատի մը ամբողջ կեանքը :

«Մեր քաղաքին հեմարանը, գրած է Էսուառ Ռոս, մուսյ էր եւ քանգրակեր : Եւկու սնկամ անխաւօրէն պատմուած եմ հոն : Ընկերներս կը խոսանգէին զիս, հո՛ն նանչցած եմ անկար բարկութիւններ, անգոր ցասում... Օ՛հ, այդ առաջից սպաւորութիւններ անդառնալիօրէն կը ձեւակերտեն մեզ : Անո՛նք կ'որոշեն մեր ամբողջ կեանքին սրամաղութներ, անո՛նք կրնան անդառնալի կերպով անկարող ընել մեզ երջանկութեան... Ուսի պիտի չուզէի մանկութիւնս վերսին ապրիլ՝ այդ անիծեալ հեմարանին պատճառաւ, այն մամը մուր վիշտերուն պատճառաւ զորս չափանսս մարդու տաւալամբներու չափ խորապէս զգացած եմ» :

Ընդհանուր կերպով, աղէ մը իր կրցածէն աւելին պահանջելով՝ տրամադիր կ'ընենք զինքը ստորակայութեան զգացումի, որովհետեւ ասով կը դատապարտենք երբե՛ք գոհացուցիչ արդիւնք ձեռք չբերելու, իր ճիգին պտուղը երբե՛ք չբաղելու : Ո՛չ միայն ուրիշները չի գոհացնիր ան, այլ, ինչ որ աւելի ծանրակշիւ է, ինքզինքն ալ չի գոհացներ : Ու իր միտքին մէջ եր-

թալով աւելի՛ խորունկ կը մխուռի այն գաղափարը թէ բնականոն մահարդակէն վար է :

Բայց, միւս կողմէ, ձգելն ալ որ դպրոցական մը ախպայ չափազանց դիւրին յաջողութիւններով՝ զայն կ'առաջնորդէ — թէ և տարօրինակ թուի առիկա — ստորակայութեան . որովհետեւ, այդ պարագային, եթէ իր նոր փորձառութեանց հետեւանքով առատ ելլէ ինքզինքին վրայ դրած չափազանց վստահութիւնը, պատրանաթափ պիտի ըլլայ և զնկղմի յուսախաբութեան մէջ :

Ասոր նման պատճառով մըն է որ «չփացած», իրենց ծնողաց ծայրայեղ գուրդուրանքին առարկայ եղած տղաք խոշոր տուրք մը կը վճարեն ստորակայութեան զգացումին : Այն տեսակ մը արքայութենէն յետոյ՝ ուր կը գահակալէին, դպրոցի առաջին օրը մեծ աղէտին սկզբնաւորութիւնը կ'ըլլայ յաճախ : Երկինքէն Դժոխք իյնալու պէս կ'ըլլան :

Յիշենք նաև ընկերային միջավայրին ազդեցութիւնը : Գործաւոր դասակարգի տղաքը, բացի անկէ որ միջին հաշուով նուազ զօրաւոր, նուազ լուսնած կ'ըլլան, յաճախ կը խոչտանգուին իրենց ընտանիքին մէջ : Ասկէ զատ չափահասի տնական աշխատութիւններով և պատասխանատուութիւններով ալ ծանրաբեռնուած կ'ըլլան՝ առանց չափահասի դիրք, ոչ ալ անոր առանձնաշնորհները վայելելու : Շահագործուած ըլլալու տարտամ զգացումը կ'ունենան և հետեւաբար՝ երբ ինքզինքնին բարեկեցիկ ընկերներու հետ կը բաղդատեն՝ իրենց դիրքին ստորակայութիւնը սաստկապէս կ'զգան :

Բ. — Ստորակայութեան զգացումը կրնայ նաև իրական ստորակայութեան մը հետեւանքը ըլլալ . կազմուածքի կամ հոգեբանական ստորակայութեան : Ամէն տխուր կամ խեղանդամ տղայ, ամէն կաղ կամ խուլ, խիստ կարճատեւ կամ ականջը ծանր, միտքով յետամնաց, տկարակազմ կամ վատոյժ տղայ՝ իր անկարողութեան պատճառաւ կրկնապէս տառապելու վտանգին ենթակայ է . ասիկա թէ՛ անոր համար որ իրապէս ստորակայ է շուրջիներէն, և թէ անոր համար որ նշաւակ կը դառնայ ընկերներուն ծաղրանքին — այդ տարիքը անգուր է —, թերևս պատճառ կ'ըլլայ նոյն իսկ իր ծնողաց նեղսրտութեան՝ որոնց արժանապատուութիւնը կը վիրաւորէ, քանի որ իրենք այդպէս ըրած են զինքը :

Գ. — Վերջապէս տղու մը — առանց որ ուէ իրական ստորա-

կայուլթիւն ունենայ — մարմինն ներկայացուցած մէկ անսովոր կամ անհեթեթ երեւոյթը կրնայ իր վրայ հրաւիրել անհամ կատակներ՝ հեղինական մակդիրի մը ընկերացած, որ զինքը կը հալածէ մինչև մահուան օրը։ չափազանց չէկ կամ չափազանց խարտեալ մազեր, ճերմակ մազերու փուռը մը, այտին վրայ կարմիր պիսակ մը, վեցերորդ մատ մը, կամ՝ պարզապէս՝ չափազանց կարճ կամ չափազանց երկար հասակ, չափազանց գէր կամ չափազանց նիհար մարմին, ծայրայեղ տգեղութիւն...

Պէտք կ'այ յիշեցնելու թէ ստորակայուլթեան զգացումի երեք աղբիւրները զորս մասնանշեցինք՝ կրնան միանալ, անոնց ապականիչ ջուրերը իրարու վրայ աւելնալ։ Եւ ան աստիճան որ մանկութեան օրերը, որոնք կեանքի արփիաշող շրջանը պէտք էին ըլլալ, ոմանց համար չարչարալից գողգոթոյ մը կ'ըլլան լոկ՝ ուր իրենց եսը իրապէս կը խաչուի ի վերջոյ։

ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՁԳԱՑՈՒՄԻՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Ստորակայուլթեան զգացումը երբ զօրանայ — այն պատճառներով զորս թուեցինք հակիրճօրէն — սաստիկ կը տառապեցնէ զսէր։ Անհատը լիճպէս պիտի հակադդէ այդ տառապանքին։ Ի՞նչպէս պաշտպանել պիտի փորձէ ինքզինքը անոր դէմ։

Ստորակայուլթեան զգացումին հետեւանքները յաջողապէս ի լոյս ածած են՝ աւելի քան դարէ մը ի վեր՝ Տօքթ. Ալֆրէտ Ատլէր — Ֆրէտտի հերձուածող մէկ աշակերտը — և իր դպրոցը։ Հատ Ատլէրի՝ ստորակայուլթեան զգացումը — կամ աւելի ճիշդ՝ «հոգեկնճիւ»ը (1), որովհետեւ ենթադիտակցութեան մէջ կը գործէ — կրնայ, պարագայի համաձայն, ծնունդ տալ ամենաայլապան ընթացքներու որոնք համակերպութենէ մինչեւ ընդվզում, երկչոտութենէ մինչեւ բռնակալութիւն, պոռոտախօսութենէ մինչեւ տաղանդ, ջլախտէ մինչեւ ոճիր, չարութենէ մինչեւ հաճոյակատարութիւն, վատութենէ մինչեւ դիւցազնութիւն, կամադրկութենէ մինչև գերազանց կամքի բարձրութիւն՝ բոլոր աստիճանները կը ներկայացնեն։

Կարելի հետեւանքներու այս այլազանութիւնը ցոյց կու տայ որ տղուն հոգիին մէջ նեղուած աղէտալի հոճնալին պը-

(1) Complexe : Այս բառը մանք բարդոյք կը թարգմանեն։ Հոգեկնճիւ, հակառակ շատ քաղցրալուր չըլլալուն, նախընտրելի կ'երեւայ ինծի, որովհետեւ իմատը անմիջապէս հասկնալի է։ Մինչ, բարդոյք երբ առանց հոգեկան ածականին գործածուի՝ կրնայ բացատրութեան կարօտիլ։ Ծ.Թ.

տուղներն ալ զանազան պիտի ըլլան՝ զայն ստացող հողին համաձայն, այն մասնաւոր պարագաներուն համաձայն՝ որոնց մէջ պիտի ծլի:

Այն միջոցը որուն տղան — և, ընդհանուր առմամբ, անհատը — կը դիմէ պայքարելու համար իր ստորակայութեան դէմ, միշտ նոյն աղբիւրէն կը բխի. այդ աղբիւրը փոխարինումն է. փոխարինել՝ անկարողութիւնը բառնալ չէ, զայն հակակշռել է ներհա՛կ առաւելութիւնով մը. թէ և կարգ մը պարագաներու մէջ բարձրման կը յանգի: Երիտասարդ մը ճանչցած և՛ որ տկար գնդերներ ունենալուն համար կը տառապէր: Տարիներով, աւտու իրիկուն, «Միւլլըրի գրութեան» մարդանքները պարտադրեց ինքզինքին, և ըմբիշ մը եղաւ գրեթէ: Երբ ստորակայութիւնը ընկերային դիրքի հետեւանք ըլլայ, այդ դիրքը բարելաւելու համար թափուած ճիգերուն յաջողութիւնը բնականաբար կը նուազեցնէ ստորակայութիւնը: Ո՛չ միշտ սակայն, որովհետեւ կեանքը երկրաչափական տեսութիւն մը չէ: Նոյն իսկ եթէ իրապէս, առարկայականօրէն որդարանալի ըլլալէ դուրի՝ տեսնօք զգացումս ստորակայութիւնը յաճախ կը վերապրի մարդուն սիրտին մէջ, և տեւական խթան մը կը մնայ իր վարմունքին: Այսպէս չէ՞ պարտքան Պոնաբարդի: Կասկածոտ, փառասէր, իր ստորակայ դիրքէն եւ կարճ հասակէն ամթաճաւոր, վախճալով որ իր ակնկալած աստիճանին պիտի չկրնայ բարձրանալ՝ կը մտադրէ, տանըմէնց տարեկանին, անձնասպան ըլլալ: Յետոյ բախտը կը ժպտի: Բայց ասիկա չի մեղմացներ իր ցանկութիւնը. որով եւրոպա՛ն կրակի կուտայ: Մարդկութեան հանդէպ արհամարհանքը չէ՞ — ատենօք իր տղու սիրտին մէջ բորբոքած — որ ամբողջ կեանքին տեւողութեան վառ պահեց տիրապետութեան հոգը:

Փոխարինումը բնութեան կողմէ գործածուած միջոց մըն է, ռազմական հնարք մը՝ մարմինին մէկ անբաւարարութիւնը չէզոքացնելու, եւ պակասող հաւասարակշռութիւնը քէչ աղէկ վերահաստատելու համար: Սրունքին մէկը կարճ ըլլալուն պատճառաւ մէկ կողմ հակելու միտող մարդուն ողնայարը «փոխարինող» կորութիւն մը կրնայ առնել: Վնասուած սիրտը կը դերաճի՝ որակը քանակով փոխարինելու համար կերպով մը: Երբ ուղեղը վերաւարդի՝ «փոխանորդում»ներ երեւան կուգան խութարուած պայտօններուն պակասը լեցնելու համար: Մտային կաշուածին մէջ ալ նո՛յն բանը կը պատահի: Բայց՝ հոս՝ փոխա-

րինումը երկու նպատակի կը ձգտի. անբաւարարութիւնը զուգակշռելու և՛ մանուսանդ՝ ենթակոն անբաւարարութեան զգացումին դէմ պաշտպանելու, որ, ինչպէս ըսինք, խիստ կակծեցուցիչ զգացում մըն է :

Ասիկա մեզ կ'արտօնէ որ փոխարինման երևոյթները երկու մեծ դասակարգերու բաժնենք. անոնք որ առարկայականօրէն կը յաղթեն անբաւարարութեան, և անոնք որ պարզապէս կը պաշտպանեն ենթական իր անբաւարարութեան մորմոքին դէմ: Առաջին պարագային յաղթական, կամ հերոսական, փոխարինում պիտի ըսենք. երկրորդին՝ պաշտպանող, կամ ֆոլադկող, փոխարինում: Մէկը խոչընդոտին դէմ ճակատէն կը յարձակի եւ կը յաղթէ, միւսը կը բաւականանայ անոր շուրջը դառնալով:

Հերոսական փոխարինում.— Փոխարինումի այս ձեւին կը հանդիպինք մանաւանդ զօրաւոր արժանապատուութեամբ օժտուած բայց մարմնական ստորակայութենէ մը տառապող սահառին մէջ: Այդ պարագային ստորակայութեան զգացումը մարտահրաւերի մը պէս կը խթանէ իր կռուի բնաղդը. «կը կարծես որ խեր» պիտի անիծես՝ կը տեսնես՝ ես քու խերդ պիտի անիծեմ»: Եւ աւելի՛ վստահ ըլլալու համար որ «խերը պիտի անիծէ», չի բաւականանար փոխարինելով. կը գերփոխարինէ՝ կորովի և յարստեւելութեան գանձեր մէջտեղ հանելով յաղթանակի հետապնդումին մէջ:

Այսպէս է որ կարգ մը անընդունակութիւններ, առնական հոգիի մը համար վիրաւորիչ, կրնան ճշմարիտ տաղանդներու ծնունդ տալ: Դեմոսթենէս ատոր տիպարն է: Վտիտ պատանի՝ ո՛չ միայն յաղթած է իր լեզուի թերութեան և երկչոտութեան, այլև իր ատենի մեծագոյն ճարտասանը եղած: Ատլէր, որ այս օրինակին կը կաթնի մասնաւոր կերպով, կը յիշատակէ նաեւ Պէթհովէնը որ խուլ էր: Իսկ իր կազմած մէկ վիճակագրութեան համաձայն՝ նկարիչներու 70%ը տեսողական այս կամ այն թերութիւնը կ'ունենան եղբր: Որով՝ ստորակայութեան յաղթելու վստասիրութիւնը, շատ պարագաներու մէջ, տաղանդ ձեռք բերելու առիթ կրնայ ըլլալ:

Ֆիզիքականին վրայ բարոյականին կողմէ տարուած այս յաղթանակին վերաբերեալ հոյակապ օրինակ մը կը հայթայթէ մեզի Վիլհէլմ Բ.ի երիտասարդութիւնը: Վտիտ ծնած, թեւին

մէկը անդամաւորոյ՝ ապագայ կայսրը կը յաջողի այդուամենայնիւ, ի գին յամառ եւ յաճախ ցաւագին ճիգերու, լաւ ձի հեծնող մը ըլլալ:

«Ինչ որ կը յազանգէր իսխանը — կը պատէ Էմիլ Լուսվիկ՝ Պիլ-նէլմի իր նշանաւոր կենսագրութեան մէջ — մասնաւորաբար իբր սպայ, հաշմութեան դէմ մղած սպայաւոր էր: Իր ամբողջ հպարտութիւնը, ամբողջ յաջողութիւնը այդ կէտին վրայ կեդրոնացած էին: Երբ առաջին անգամ իր հիւսարները կը ներկայացնէ իր երկիրագողու մեծ հօրը եւ հօրեղբօրը որ իբր ձի հեծնող հուշակաւոր էր, երկուքն ալ ապագահար կ'ըլլան, ու ծերունի վեհապետը կ'ըսէ. «սքանչելի՛ աշխատանք. երբեք միտքս պիտի չանցնէի»: Իսխանը ասկէ ետք, այն համոզումը կ'ունենայ որ սկարտիւնը անյադրելի չէ. քէ ինք ալ իր հայրերուն եւ ընկերներուն չափ քաջ է»:

Տարաբախտ Վիլհէլմի կեանքին յետագայ ընթացքը ցոյց կու տայ սակայն թէ այդ փոխարինումը, որքան ալ հերոսական անտարակոյս, մակերեսային մնացած էր, աւա՛ղ: Պատճառը այն է որ իր յաղթելիքը նուա՛ղ անկար թիւն էր քան անչափելի ունայնամատութիւնը որ չէր ուղիւր համակերպիլ: Ուստի իր յարաբերական յաղթանակը հողիէն չքաշեց չհանեց անբաւարարութեան զգացումին կսկծեցնող փուշը: Երիտասարդ իշխանը չհասկցաւ — իր դաստիարակներն ալ չհասկցան — թէ՛ այս պարագային՝ քաջութիւնը կը կայանար ո՛չ այնքան կատարեալ ձի հեծնող մը ըլլալու մէջ — ինչ որ ֆիզիքսապէս անկարելի էր — որքան պարզապէս ընդունելու մէջ իր անկարողութիւնը, պայմանաւ որ ան փոխարինուի (երբ իմացական բարձր ձիրքեր պակսին) ուրիշ տեսակ առաքինութեամբ մը, — բարոյական առաքինութեամբ մը — համեստութեամբ:

Ստորակայութիւնը փոխարինել պակասող յատկութիւններէն աւելի բարձր յատկութիւններով. ահա՛ փոխալ դեղագիրը յաղթական փոխարինումին: Բարիին այս օրինակը վրիժառութիւնը չարէն, արդարին՝ անարդարէն, հրապուրած է միշտ ժողովրդային հոգին, ու պանծացուած կը գտնենք զայն շատ մը առասպելներու եւ հէքեաթներու մէջ, ինչպէս Մոլարիկին եւ Բրուկին՝ ուր կրտսերը, տկար եւ արհամարուած, կը յաղթանակէ ի վերջոյ երէցներուն չարութեան եւ ճակատագրին անզթութեան: Նոյնիւ իր իմաստութեան եւ համբերատարութեան:

Պատգամող փոխարինում. — Երբ ստորակայութիւնէ տառապող անկարող է զայն պարտութեան մատնելու զուգակը՝

ռող ընդունակութիւններ դարգացնելով իր մէջ — և երբ բաւական փիլիսոփայ չէ ընդունելու համար ուրիշներէ ստորակայ ըլլալը — «խաբի՛լ» կը ջանայ՝ կեղծելով կամ յարձակողականի անցնելով։ Բայց յարձակողականն ալ իրեն համար կեղծելու միջոց մըն է։ Կեղծելը տկարին դէնքն է։ Եւ առանց որ խաբելու միտք ունենայ, կը տարուի կեղծելու որովհետեւ մարդկային բնութեան միտումն է ատրկա։

Վախկոտը անտառին մէջ կը սուլէ քաջի երկւոյթ առնելու համար։ Նետող-բռնողը, կոկոզաբանը ա՛յնքան աւելի կը ջանայ փայլիլ որքան աւելի կ'վզայ իր ոչնչութիւնը։ Չունեւոր միջակորեարը փոշի կը նետէ աչքերու որպէսզի չնշմարեն թէ նեղութեան մէջ կը տապկուի։

Շահեկան է հաստատել թէ ի՜նչ դիւրաւ կը յաջողին հանրութեան աւջև քողարկումի (camouflage) այս փորձերը։ Ո՛չ միայն ամենօրեայ աշխարհիկ կեանքի, այլ և քաղաքական կեանքի մէջ՝ քանի՜ քանի տխմարներ լոկ յանդգնութեան կը պարտին իրենց յաջողութիւնը։

Չտեսին հոգեբանութիւնը ուրուագծելու էինք հոս՝ որուն բանը-գործը կ'ըլլայ քողարկել իր ծագումին կամ զարգացումին ստորակայութիւնը։ Դիտե՛նք կարգ մը նոր հարուստներու պատմութիւնը, որոնք՝ պատերազմէն յետոյ՝ իրենց գրասենեակին կոյս մնացած դարակները լեցնելու համար կանգունո՛ւմ կ'ապսպրէին անարժէք հին գիրքեր։ (1) Հապսո՛ խելառ շարժավարի հոգեբանութիւնը։ Ինքնաշարժ ի՜նչ թանկագին գործիք մըն է փոխարինումի։ Ամէնէն անխելք, ամէնէն տկար, ամէնէն դանդաղաշարժ մարդը կրնայ առանց դժուարութեան ինքզինքին պարդեւել զօրաւորի և արագընթացի հմայքը, ինչպէս նաև հաճոյքը՝ ուրիշները գլել անցնելու... ճամբաներուն վրայ։

Ստորակայութենէ տառապող տղան յաճախ զօրաւորի հովեր պիտի առնէ ուրեմն։ Պարծենկոտ պիտի ըլլայ, մարդու հետ իյնալ պիտի սիրէ, շարունակ պիտի ջանայ յոխորտալ, մեծերուն նմանիլ, մեծութիւն ծախել։ Եւ կամ խեղութիւն պիտի ընէ, որովհետեւ յամառութիւնն ալ պատրանքը կուտայ

(1) Համաշխարհային թիւ 1 պատերազմին է ակնարկութիւնը. արգարե, հեղինակը կ'ըսէ. «Այս յոգուածը նախ, 1928ին, բանաստեղծեան մը նիւթ կազմած է, յետոյ հրատարակուած 1930ին, Ներկայ ձեռն մէջ—նախորդին վրայ քանի մը յաւելումներով— լոյս տեսաւ 1934ին»։ Ե. Թ.

ուժեղ ըլլալու, հզօ՛ր, ինքզինքը կառավարելու կարողութիւնը ունենալու եւ մարդէ՛ կախեալ չըլլալու :

Ուժի ցուցադրումը՝ այսպէս՝ ամենայնաձախ թաքուն եւ չխոստովանուած տկարութեան նշան է. որովհետեւ զօրաւորը պէտք է՝ զգար լնաւ ասոր-անոր ծանուցանելու թէ զօրաւոր է : Ինչի՞ պիտի ծառայէր : Մեծամոլութեան հիւանդութիւնը ա՛յն ատեն միայն դոյութեան իրաւունք կ'ունենայ երբ իրական պզտիկութիւն մը փոխարինէ : Ասիկա ճշմարիտ է ո՛չ միայն անհատներու համար, այլեւ ընկերութեանց համար : Այն կառավարութիւնները, ինչպէս կրօնները, որոնք ազատութիւնը կը խոչտանգեն, կ'աքսորեն եւ կը դաժնադատեն, արգելքներ կը սահմանեն, մամուլը կը չարչրկեն եւ յայտնուելիք կարծիքները կը պարտադրեն, հակառակ երեւոյթին՝ զօրաւոր չեն ըլլար : Եթէ իրաւցընէ զօրաւոր ըլլային, պէտք պիտի չունենային աչք վախցնող այդ միջոցներուն : Բայց որովհետեւ կաւէ ոտքերով հսկաներ են՝ կ'զգան որ, առանց այդ երկաթեայ զրահին, պիտի փլչէին ողբալիօրէն :

Այսպէս է — եթէ ներուժի դարձեալ անդրադառնալ այդ ողբերգական պարագային — որ Վիլհէլմ Բ. ի կայսերապաշտ եւ զինապաշտ յայտարարութիւնները եւ անխորհուրդ մարտահրավէրները իրականին մէջ տկարութեան ապացոյց էին լոկ : Կայսրը բնաւ ռազմասէր չէր : Վախկոտ բնաւորութեան տէր ըլլալով, վատասիրտ նոյն իսկ, անհրաժեշտօրէն խողաղապաշտ էր, սկսած՝ խողաղապաշտ : Կռուասիրտութենէ մղուելով չէր, այլ վախէ՛ն, ասպնդութեան անբնականոն պահանջէն էր -- որովհետեւ ամէն կողմ թշնամի կը տեսնէր — որ բանակներուն ամէնէն անկող կազմեց իր շուրջը : Իր ձգտումը պաշտպանողական էր լոկ : Բայց աւելի լաւ քողարկելու համար հիւանդագին անապահովութիւնը որմէ կը տառապէր, եւ մեղմացնելու համար դայն, մարտահրավէրի երեւոյթ կուտար շարունակ առ նոր : Ամբողջ տշխարհ խաբուեցաւ : Ե՞րբ արդեօք դիւանագէտները հոգեբան պիտի ըլլան :

Այս կեղծող փոխարինումին քով, ուրիշ տեսակ փոխարինում մըն ալ կը նշմարենք, նախորդին բաւական նմանող, զոր մխիթարիչ պիտի կոչեմ աւելի : Այս ալ իր կարգին պէսպիսութեան ամբողջ աստիճանաշարք մը կը բովանդակէ :

Նախ ունենք այն պարագան ուր ենթական երեւակայութեան, անըմանքի կ'ապուենի : Անուրջի կեանքէն կ'ուզէ այն

իշխանութիւնը և զօրութիւնը զոր իրական կեանքը կը զլանայ իրեն։ Մեզմէ ո՞վ տղայութեանը, պղտիկ ձգուած ըլլալով և փոխարինելու ոյժ չունենալով, ըղձացած չէ Դիգէսի մատանին մատը անցընելու կարող ըլլալ, որպէսզի իր հակառակորդին արժանի զատուած պատիժը տար, իր կամքին ենթարկէր զայն։ Ռոպէս տը Դրաի Մորթալեթըն (L'Écorché) — ստորակայութեան կատարեալ տիպար մը — «իւր մանկութեան սիրական երազը միտքը կը բերէր, որմէ տակաւին հաճոյք կ'զգար. այն էր՝ անտեսանելի ըլլալ»։

Այսպիսի ցնորական մտածումներ բոլո՞ր տղաքը կ'ունենան։ Բեռքէն շատ առաջ հաճոյք զգացած են իրենք իրենց պատմութիւններ պատմելէ, սպանիական զվեակներ կառուցանել։ Պարիկի պատմութիւնները ամէնուս սիրտին խորը քտնուող բռնուն փափաքը կը յայտնեն ամենապիսի աշխարհի մը մէջ ապրելու ուր առաքինի մարդը — այսինքն մենք — օժտուած ըլլար հերակլեան ուժով կամ գերբնական կարողութիւններով, և կամ տէր ըլլար անասման Գանձի մը որուն շնորհիւ ամբողջ աշխարհ իր կամքին ենթարկուէր բոլորանուէր։

Բայց երբեմն այս ցերեկեայ երազանքը մտահոգիչ աստիճանի կը հասնի։ Կարգ մը տղաք դրապէ՛ս կ'ապրին իրենց կառուցած այդ ցնորական աշխարհին մէջ։ Երեւակայական եղբայրներու և քոյրերու մասին կը խօսին ամենապիսի շեշտով մը որ իբր թէ իրական անձեր ըլլային։ Ու այդ տղոց չուրջինները մտահոգ կ'ըլլան տեսնելով անոնց այս տեսակ մը ցնորքով պատեանաւորութիւլ։ Երեւոյթը ըստինքեան վտանգաւոր չէ։ Նշան մըն է սակայն, ախտանշան մը թաքուն տառապանքի որուն յաղթելու համար հնարքներ կը փնտռէ տղան. ու ինչ որ պէտք է յատկօրէն պորդել՝ այդ տառապանքն է. կամ աւելի ճիշդ՝ անոր պատճառը։ Իրականութենէն այդ փախուստը կրնայ մինչև քնաչըջութեան հասնիլ(1)։

(1) Յիշեմ հոս Էլիէն Սիբի Բնաբալիյն փուլերը զորս Թեոսոր Ֆլուռնուա ուսումնասիրած է Des Indes à la Planète Mars (Genève, 1900) գիրքին մէջ։ Ֆլուռնուա առաջինը եղած է այսպիսի «եմբագիթակցային վէպեր»ը «վաղանցուկ վերիժառութիւն» մը նկատող «իթալիկ կողմէ՝ իրականէն, անիրականացալի երագին կողմէ՝ ամեցօրեայ հարկադրանքներէն, անզօր ցենչերուն կողմէ՝ ջախջախիչ եւ կոյր ճակատագրէն»։

Երբեմն, անուղղի մէջ չէ այլևս որ ենթական կը հեռանայ իրեն չափազանց դժնդակ թուող միջավայրէն՝ շնչելու համար ա՛յնքան բաղձալի անկախութիւնը. իրաւցընէ՛ կը հեռանայ։ Կը փախչի տունէն, ու առիկա կանխամտածումով չ՛ըլլար միշտ։ Փախուստներու ամէնէն հռչակաւորը կանխամտածուած չէր։ Ժան-Ժաք, տասնըվեց տարեկանին, «մտահոգ, դժգոհ ամէն բանէ և ինքզինքէն, արհեստին հանդէպ պաղ», երբ իրիկուն մը քաղաքին դռները գոց կը գտնէ իր առջեւ, պահ մը անձկութեան մատնուելէ յետոյ՝ այն ի՛նչ խնդութիւն կ'զգայ ազատութեան տիրանալուն համար։

«Ո՛րքան որ սխուր երեցեր էր ինծի այն վայրկեանը, ուր սարսափս փախչելու ծագիր թելադրեց ինծի, նո՛յնքան սխալի քուեցաւ այն վայրկեանը ուր գործադուրեան դրի գայն... Անկախութիւնը զոր կը կարծէի ձեռք ձգած ըլլալ՝ զիս սոգորող միա՛կ զգացումն էր։ Ազատ եւ ինքնիշխան՝ կը կարծէի թէ ամէ՛ն բան կրնայի ընել, ամէ՛ն բանի հասցիլ, կը բաւէր որ խոյանայի՝ թոչիլ քաղաքացալու համար այերից մէջ։ Վստահութեա՛մը կը մեղէի ընդարձակ աւելարհը. արժանիս պիտի լեցնէր զայն. ամէն մէկ քայլիս՝ խնջոյցներու, գանձերու, արկածախնդութեանց պիտի հանդիպէի...»։

Եիշատակենք անցողակի — իբր օրինակ չափահասներու փոխարինիչ արտադրութեանց — արուեստի այն բոլոր գործերը որոնց մէջ հեղինակը ինքզինքը այնպէս կը ներկայացնէ ինչպէս որ պիտի ուղէր ըլլալ. իր իրական վիճակին բոլորովին ներհա՛կ վիճակով։ Հապիտին տխրութիւնը առակի կարգ անցած է, ինչպէս նաև մելամաղձոտ խառնուածքը զաւեշտագիր ներուն։ Մուլիէն իր առողջական վիճակին հետեւանքով անձկութեան մատնուած ըլլալուն համար է որ ժխտեց հիւանդութեան գոյութիւնը «Երեւակայական հիւանդ»ին մէջ։ Եւ յաճախ դիտել տրուած է որ Գերմանիա նաբոլէոնի մոյկին տակ հեծեծած, իր ազգային զգացումներուն խոցոտուած պահո՛ւն արտադրեց ամէնէն լաւատես և գաղափարապաշտ գրականութիւնը, որուն նմանը աշխարհ տեսած ըլլար երբեք. Ֆիխթէ և Հէկէլ՝ նոր մեխիսներ՝ կը վերատեղծէին տիրաբար, ուրանալով ամէն ինչ որ կրնար իրենց իլձերուն չափ դնել։

Բայց վերադառնանք տղոց։ Սահմանը անցնի՛լ պիտի ըլլար՝ իրականութենէն տեսակ մը փախուստ նկատել ստորակայութեան հոգեկնճիւղին այն միւս հետեւանքը զոր մատնանչել կարեւոր է. «յոռի ունակութիւններ»ը։ Բնա՛ւ. որովհետեւ, հոս ալ, անհատը իր մարմինէն կը պահանջէ սփոփաւոր պատրան-

քը այն հեշտանքներուն և կարողութեան զորս շրջապատը կը զլանայ իրեն, ինքզինքին հանդէպ առանձին, բացարձակ տէր իր մտերմիկ կեանքին վերջալուսային թագաւորութեան մէջ. առատաձեռն լաշխիչը կ'ըլլայ, վե՛րջապէս, այս աշխարհի բարիքներուն... Եւ այստեղ պիտի յիշատակեմ — գիտութիւնը շնական է երբեմն իր մերձեցումներուն մէջ — «մտերմիկ օրագիր»ը. որովհետեւ զայն գրելը համարժէք չէ՞ դէթ կարգ մը պարագաներու մէջ, ինքզինքին հետ տեսակ մը սիրային գաղտնի յարաբերութեանց:

Բայց, ահաւասիկ ուրիշ պարագայ մըն ալ. անկարը իր թերութիւնը պիտի փոխարինէ ջանասիրութեամբ: Մեծ բաներ ընկելու անկարող՝ պիտի խաբէ ինքզինքը — թերեւս ուրիշներն ալ — պղտի՛կ բաներու նուիրելով իր ամբողջ հոգածութիւնը: Խոտորիչ փոխարինում պիտի կրնայինք ըսել: Այսպէս, ուշիմութենէ զուրկ տղայ մը դաստարանին մէջ լաւ պիտի երեւայ դասերը գոց սովվելով, մտածումը յիշողութեամբ փոխարինելով և կատարելապէս կարողապահ ըլլալով: Ասանկներն են զորս դիւրաւ «պզտիկ սուրբ» կը կոչենք: Ուսուցիչներէն սիրուած, որովհետեւ քաղաքավար և ուշադիր կ'ըլլան, պզտիկ սուրբերը գէշ համբաւ կ'ունենան սովորաբար իրենց դասընկերներուն մէջ որոնք կը մեղադրեն զիրենք որ խարդախութիւն կ'ընեն խաղի ոտեն, այն մեծ խաղին՝ որ դպրոցի կեանքն է, երկու հակառակորդ կողմերու բաժնուած. մէկ կողմը աշակերտները, միւսը ուսուցիչները: Պզտիկ սուրբերը պատշէշին անազնիւ կողմը կ'ըլլան: Աւելորդ է ըսել որ իրենց հանդէպ ցոյց տրուած այս արհամարանքը կը վատթարացնէ իրենց հոգեկնճիւղը: Եւ, ի վերջոյ, ուսուցիչները իրաւո՛ւնք ունին իրենց համարումը անխախտ պահելու այդ դժբախտներուն հանդէպ՝ որոնց գործածած փոխարինումի միջոցը, եթէ վաղսնցուկ յաջողութեանց միայն կը յանգի և արժանի չէ «յաղթական» կոչուելու, սակայն և այնպէս բաւական մեծ հերոսութիւն կ'ենթադրէ իր կարգին:

Միտքի նոյն տրամադրութիւնը — եթէ կատարուած աշխատութեան անկիւնէն նկատի առնուի — իմաստակութեան ծնունդ կուտայ, որ ուրիշ բան չէ բայց եթէ փանաքի մանրամասնութեանց ընծայուած անդէպ ուշադրութիւն: Երբ մէկը անհարկի կերպով բնագիրի տառին կը կառչի, պատճառը այն է որ չի կրնար հաւանօրէն անոր միտքը հասկնալ: Մեղքնա-

լի՛ք է բժախնդիր, չնչին մանրամասնութիւններով զբաղողը որ անսքող ցոյց կուտայ, առանց միտքէն անցընելու, իր իմացական խեղճութիւնը:

Բայց փառասիրութենէ առչորող տղան — կամ աւելի ճիշդը՝ իր ենթագիտակցութիւնը — ուրիշ հնարքներ ալ ունի իր տոպրակին մէջ: Փոխանակ ծածկելու իր ստորակայութիւնը, կրնայ՝ ընդհակառակը՝ ցուցադրել զայն, չտիպողանցել, շահագործել: Այն կարեւորութիւնը զոր իր մերձաւորները կը զլանան իրեն, ձեռք պիտի բերէ հիւանդ ըլլալով: Հիւանդ. այսինքն մէկը որ նկատի կ'առնուի, զոր կը խնամեն, որուն քմահաճոյքները կը կատարեն, որով կ'զբաղին, որուն որպիսութիւնը կը հարցնեն: Անկարութիւնը՝ այսպէս՝ փառքի տիտղոս մը կ'ըլլայ: Ռօպէտ աը Դրա աղաւոր մէկ օրինակը տուած է ատոր իր Մարթագեծը ին մէջ. «Մարք կը տեսնէր որ ո՛չ ոք կը մեղքնար զինքը իր կարճատեւութեան համար: Ի՞նչ օգտակար բան մը պիտի ըլլար եթէ արուեստները ջախջախուէին ինքնաշարժի արկածէ մը: Այն տեսն ո՛վ պիտի համարձակէր վնաս հասցնել իրեն»: Ու, յետագային, Մարք, երբ կ'իմանայ որ կուրնալու դատապարտուած է, ախիտանքի հառաչանքով մը կը մրմնջէ. «կուրնալ. ի՞նչ այլութեանութիւն...»:

Անկարութեան շահագործումը երկու հարստակի կը ծառայէ միեւնոյն ատեն: Ամէնէն առաջ, ուշադրութիւն և համակրանք կը հրաւիրէ ենթակային վրայ: Լքուած տղան յանկարծ առաջին կարգի դեր խաղալ կ'սկսի. ինչ որ իր բաղձանքն էր: Հոգածութեան, փողաքանքի առարկայ կ'ըլլայ, մայրը զինք անկողինը կ'առնէ, կը հարցնեն իրեն թէ ի՞նչ կը սիրէ, ի՞նչ կը փափաքի: Այսպէս ի՞նք կ'ըլլայ հրամայողը: Առաջ հարստահարութեամբ՝ հիմա բռնապետի կարգ կ'անցնի: Խոհանոցէն մինչև հիւրանոց, ամբողջ տունը իրեն կ'ենթարկուի բոլորանուէր. տունին կեդրոնական անձնաւորութիւնը կ'ըլլայ:

Բայց անկարութիւնը դեռ ուրիշ բանի ալ կը ծառայէ. քննադատութիւնը զինաթափ ընելու, ուրիշին քննադատութիւնը, և ու՛ր աւելի ինքնաքննադատութիւնը: Բայց, հիւանդ եմ: Յարգելի՛ պատրուակ, չքմիականքներու լաւագոյնը, միշտ ընդունելի: Ուստի կարելի է հանգիստ քնանալ, և մանաւանդ խիղճը քնացնել: Ի՞նչ օգուտ պայքարելէ, ի՞նչ օգուտ հոգ ընելէ: Ծար չունիմ, հիւանդ եմ: Այս անգիտակից կամ կէս-գիտակից շարժաւթները

գլխաւոր արմատները կը կազմեն շատ մը իսթէրիք երեւոյթներու, մանկանց ջղագրգռութեան շատ մը ախտանշաններու անկողինը թրջել կամ թոթովել՝ անտարակոյս անյապիսի ծագում մը ունին յաճախ «Հիւանդութեան ապուհինը» ու ծանօթ երեւոյթն է որուն վրայ իրաւամբ ծանրացած է Ֆրէժուս :

Ամէնը այս չէ դեռ : Երբ մարդ անկարող ըլլայ պայքարի, երբ հերոսի խմոր չունենայ, երբ չ'ուզեր ինքզինքը հիւանդ ցուցնել, միջոց մը կը մնայ տակաւին տիրապետութեան իր պահանջքը գոհացնելու : Ինք չի՞ կրնար բարձրանալ : Լա՛ւ ուրեմն — տարրական կիրառութիւն յարաբերականութեան սկզբունքին — ուրիշները կը նուաստացնէ, մանաւանդ իր վրայ ստուերածողները : Անոնց պղտիկ թերութիւնները կը լրտեսէ, կ'ընդգծէ զանոնք հեզանքներով՝ ծիծաղելի ընելու համար յաչս ուրիշին : Եթէ թերութիւն չունենան, կը յօրինէ, որով՝ կը զրպարտէ : Դաստիարակը երբեք մոռնալու չէ որ ընկերներուն հետ իյնող աշակերտ մը մեծ երեւալու փափաք կ'ունենայ աւելի, քան ուրիշին վնաս հասցնելու : «Մարդ շատ յաճախ ունայնամտօրէ՛ն չարախօս կ'ըլլայ աւելի՛ քան չարամտօրէն» ըսած է իրաւամբ Լա Ռօֆֆուքօ : Պատճառը այն է որ ուրիշներուն չենք ներեր մեր այն թերութիւնները որոնք մեզ անոնցմէ ստորակայ կ'ընեն :


Այս տեսակ մը յարձակիչ փոխարինումը, զոր պիտի կրնայինք վրեժխնդիր կոչել՝ քանի որ մեզ կը մղէ մեր թերութեանց վրէժը ուրիշներէն լուծելու, աւելի՛ եղբրական երեւոյթ կ'առնէ երբեմն : Անձնասպանութեան կը տանի տղան :

Անձնասպանութիւն . մանկութեան հոգեբանական ախտաբանութեան մահաբոյր դուռը : Տարակոյս չկայ որ մեր խեղճ աշխարհը լիցուն է տգեղութիւններով և անիրաւութիւններով : Բայց անկէ բաժնուիլ ուզել տղայ հասակէն : Դասալիք ըլլալ այն տարիքին ուր մարդ դեռ անտեղեակ կ'ըլլայ այս աշխարհի աղտեղութիւններէն, ուր կեանքը հաճոյալի և ժպտուն երեւալու էր իրեն, գրկաբաց, արեւով և խորհրդաւոր յոյսերով խնդալիս : Ի՛նչ տխուր բան :

Եւ սակայն այդ տխուր բանը իրողութիւն է, չափազանց յաճախադէպ իրողութիւն, աւա՛ղ : Պատեւազմէն առաջ կ'ատարուած վիճակագրութիւն մը ցոյց կուտայ որ Ռայխի մէջ անձնասպան եղող դպրոցականներու թիւը 53 ի կը հասնէր. այսինքն չարաթը մէկ հատ : Եթէ պատճառը միշտ ստորակայութեան քզ-

H 41262

176891



դացուամը չէ — ոմանք հետեւանք են մերժուած սիրոյ (այդ տա-
րիքին արդէն), ինչպէս նաեւ խելագարութեան — այլ սա-
կայն ամէնէն յաճախադէպը ան է:

Անձնասպանութիւնը փոխարինում չէ անշուշտ: Բայց ա-
նոր մղող մտածումը փոխարինում մըն է. փոխարինում կ'ըլ-
լայ չարաշուք ծրագրին գործադրուելէ՛ն առաջ: Վրիժառու-
թեան մտածում կամ սփոփարար մտածում՝ դրեթէ միշտ միա-
ժամանակ գոյութիւն կ'ունենան անտարակոյս: Ահա թէ ի՞նչ-
պէս կը բանաձեւուի վրիժառութեան մտածումը. «Շարունակ
խոշտանգեցիք զիս, ո՛վ անարժան ծնողք, ո՛վ դաժան և տմար-
դի ուսուցիչներ, Թող մահա ձեր արդար պատի՛ժը ըլլայ, յա-
ւիտենական տապալումը» — Բայց ուրիշ ձայն մը՝ նուազ դա-
ժան՝ արձագանգ կուտայ անոր. «Ողջ եղած ատենս չսիրեցիք
զիս. պիտի սիրէ՛ք երբ մեռած ըլլամ: Արհամարեցիք զիս. հի-
մա կորու՛ստս պիտի ոգրաք: Այն ծաղիկներով զորս չգիտցաք
սփռել մատաղ տարիներուս շուրջ, որ փթթիլ միայն կը ցան-
կային ձեր սիրոյն խնդութեանը մէջ, հիմա գերեզմո՛նս պիտի
ղարգարէ՛ք՝ տխրութեանը մէջ ... ձեր սիրոյն»։ Այդ սէրը,
անդրչիրիմեան սէր, զոր անձնասպանութիւնը՝ կերպով մը՝ ար-
թննալու կ'ստիպէ՝ վերջապէս, անո՛ւ՝ մխիթարիչ փոխարինումը:

Բայց անձնասպանութիւնը կրնայ նաեւ պարզապէս խու-
սափում ըլլալ... խուսափում անհանդուրժելի կացութենէ մը,
սուանց որ ո՛րէ՛ փոխարինումի խնդիր ըլլայ. պարզապէս հրա-
ժարում պոյքարէ:

Արդարեւ, փոխարինման փորձերը կրնան բոլորովին ձա-
խողիլ: Երբ ենթական կարող չըլլայ դէմ դնելու իր ստորա-
կայութեան, ոչ ալ զայն քողարկելու չափ ճարպիկ, այն ատեն
մերկ ճշմարտութիւնը կը տեսնէ, ցաւը կը տաղէ զինքը, եւ
դառնութեամբ կը լեցուի: Համակերպութիւն կամ յոռետեսու-
թիւն, կամազրկութիւն, երկչոտութիւն, դառնացում, վնաս-
տութիւն — և վերջիվերջոյ անձնասպանութիւն —. ասոնց-
մէ մէկուն կրնայ յանգիլ վրիպած փոխարինումը:

Սակայն փոխարինումը ո՛ր ձևով ալ ըլլայ, զգացում մը կայ
զոր, հնարքներու ամէնէն ճարտարիմացն իսկ անկարող է բո-
լորովին մարելու, և որ բուն ախտանիշն է ստորակայութեան
հոգեկոնճիւրն. ըլլա՛յ մնայուն ստորակայութեան, ըլլա՛յ վաղ-
անցուկ ստորակայութեան. այն է՝ դիւրագոյածութիւնը — Դիւ-
րագոյածութիւնը խիստ դիւրսրբորքը զգայնութիւն մըն է այն

ամէն բաներուն հանդէպ որոնք կը դպչին հոգեկնճիւ ըսուածին : Ինքնապաշտպանութեան բռնուն հակազդեցութիւնն է ան որ յառաջ կու գայ զգայուն կէտին խայթուելէն և կը մատնէ անոր քոյրութիւնը : Լապիշի Բեռլիոմը , որ կը նախընտրէ խաւքան և անոր ծառայութիւն իսկ կը մատուցանէ՝ այն պատուական տղէն որ իրեն օգնութեան հասնելով իր ստորակայութիւնը կը յիշեցնէ , անմահ պատկերազարդում մըն է խնդրոյ առարկայ երեւոյթին :

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՐՄԱՆՈՒՄ

ՍՏՈՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄԻՆ

Ստորակայութեան զգացումին հոգեբանական մանկավարժութիւնը երկու կողմ ունի . ա. կանխազգուշական , բ. դարմանական :

ա. կանխազգուշութիւնը , հոս ալ ինչպէս ուրիշ պարագաներու , կը կայանայ չարիքին պատճառը բառնալու մէջ : Երկու ընկիւք ունի . մէկը ժխտական , այսինքն զգուշանալ դաստիարակական այն սխալներէն որոնք ծնունդ կու տան կամ կը սեւեռեն ստորակայութեան զգացումը : Միւսը դրական , այն է նպաստել տղուն անհատականութեան բոնաւոր զարգացման :

Ինչպէս կը տեսնուի , ամբողջ դաստիարակութեան արուեստն է խնդրոյ առարկայ : Ստորակայութեան մանկավարժութիւնը կարելի չէ անջատել ընդհանուր առմամբ մանկավարժութենէն : Կատարեալ դաստիարակութիւն մը , անթերի դաստիարակներ , հին տանի բժշկութեան «ամէն բանէ առաջ չվնասել» ու սկզբունքով տոգորուած ուսուցիչներ , ընկերային առողջ մթնոլորտի մը մէջ դաստիարակուած ընկերներ՝ ո՛չ մէկ պատրուակ պիտի ընծայէին ստորակայութեան հոգեկնճիւնին փթիթիւնը :

Բաւականանանք քանի մը դիտողութիւններով :

Դաստիարակներուն թերութիւնները . ահա՛ ինչ քանի հետեւանք է մեծ մասամբ ստորակայութեան հոգեկնճիւնը : Արդէն ակնարկութիւն ըրինք այս մասին : Հոս դիտենք միայն որ այդ թերութիւնները յաճախ յառաջ կու գան անճարակ դաստիարակներուն իրենց ալ սխալ դաստիարակութեան մը զոհ դառնալէն , որով խնդրոյ առարկայ հոգեկնճիւնը իրենց մէջ ալ սեւեռած կ'ըլլայ : Դաստիարակչական սխալները՝ այս կերպով՝ սերունդէ սերունդ փոխանցուելու վտանգ կ'սպառնան : Կշռե-

ցէ՛ք անգամ մը ձեր անսահման սրտասխանատուութիւնը, դո՛ւք որ հոգիներու յանձնառութիւն ունիք:

Հա՛յր մը, օրինակի համար, պիտի բռնանայ իր զաւկին վրայ, որովհետեւ պզտիկութեանը՝ իբր մէկ հատիկ զաւակ՝ տունին բռնապետը եղած է. կամ որովհետեւ, տղայութեանը խոշտանգուած ըլլալուն, զաւակը խոշտանգելու պիտի միտի վրէժխնդիր փոխարինութեամբ: Այդ կերպով կը հաստատէ իրեն ատենօք զլացուած իշխանութիւնը: Ըսէ՛ ինձի թէ ի՞նչ պէս կը դաստիարակես, ըսե՛մ քեզի թէ ի՞նչպէս դաստիարակուած ես:

Դաստիարակներու թերութիւններէն յետոյ, կարգը կու գայ քննելու դաստիարակութեան մեթոտներուն թերութիւնները: Անհամար են անոնք: Բաւականանա՛նք երկու ծայրայեղ տիպարներով. իշխողական ու խիստ կարգապահութեան մեթոտը, և ա՛յն՝ զոր պիտի կրնայինք կոչել խանդակաթ հոգածութեան կամ չփացնող մեթոտ:

Իշխողական մեթոտը կարգապահ քաղաքացիներ սրտառաստելու կը հետամտի: Բայց իրականին մէջ տղուն ձգտումները սանձելով միայն կը յաջողի, անոր անհատականութիւնը, ինքնուրոյնութիւնը իսպառ խորտակելու և ճի՛շդ ստորակայութեան զգացումը ծնցնելու վտանգը դիմադրաւելով: Անշուշտ, կարգ մը տղաք կը ճկին այդ մեթոտին և կ'ընդունին զայն: Բայց այդպիսիները ի՞նչ կ'ըլլան յետագային. սովորամոլ և ընդունուած կանոններու կառչած անձեր, զուրկ երեւակայութեան նշոյլէ, որոնք ինքզինքնին աշխարհի մէջ իրենց տեղը կ'զգան ա՛յն ատեն միայն երբ ամէն ընկիւքնին ձայնագրութեան թուղթի պէս նախագծուած ըլլայ: Ասանկները գրասենեակի կատարեալ պաշտօնականներ պիտի ըլլան՝ օրինակի համար, մանր մունր բաներով զբաղող, բանբարակ, վարչութեանց աչքին լոյսը, հանրութեան պատուհասը: Բայց ի՞նչ պիտի ըլլան այն օրը ուր՝ նոր կացութեան մը առջև՝ պէտք պիտի ունենան իրենց գործին վերաբերեալ նոր միջոցներ յղանալու, ձեռնարէցութիւն ցոյց տալու: Կեանքը, որ բանաւոր պարագաներէ չի բաղկանար, խիստ շատ յուսախաբութիւններ պիտի վերապահէ իրենց:

Ամենայաճախ, բարեբախտաբար, աշակերտը, դպրոցական կանոնադրէ՛ն ալ աւելի անթեքելի կենսական քնազդէ մը առաջնորդուած, կը խուսափի՝ հազար ու մէկ ձևերով՝ այդ ճնշիչ

գրութենէն։ Բայց կը պատահի նաև որ ընդլզի կարգապահութեան ծայրայեղութեան դէմ, հայրական չափազանց խիստ իշխանութեան դէմ՝ երբ իր ստորակայութեան ղեւացումը ծայր սատիճան ծանրանայ։ Կը տառապի, կը պայքարի, կ'ապստամբի հօրը դէմ, և՛ ի վերջոյ՝ օրինապէս հաստատուած ամէ՛ն իշխանութեան դէմ։ Ուսուցիչ, պետ, պաշտօնատար, պետութիւն, ընկերութիւն՝ որոնք հայրական իշխանութեան ընդարձակումը կը նկատուին, խոչընդոտ՝ իր անձին տէրը ըլլալու արդար իրաւունքին։ Անիշխանական և ոճրագործական ձգտումները ուրիշ աղբիւրէ չեն բխիր յաճախ — Չեմ խօսիր այն ջղային ախտանիշերուն և զանազան ուրիշ պատահարներու մասին որոնց պատճառ կրնայ ըլլալ այս կարգապահիկ և սանձահարիչ մանկավարժութիւնը։

Կարգապահութիւն։ Ի՞նչ չարիքներ կը գործուին քու անունիդ երկդիմութեան երեսէն. որովհետև մերթ՝ վեհ և անչափանդիբ՝ այն բարոյական դաստիարակութիւնն ես որուն միակ փառասիրութիւնը տղուն հոգեկան բարձրացումն է. — և մերթ՝ պարզապէս ինքնապաշտպանութեան միջոց դաստիարակին համար, ոստիկանական բիրտ կանոնի աստիճանին կ'իջնես որ սահմանուած է ծնողաց կամ ուսուցիչներուն հանգիստը, կամ դասարանին սովորամոլ կեանքը ապահովելու, առանց հոգդ ընկու թէ ի՞նչ աղէտալի հետևանքներ կրնայ յառաջ բերել այդ քմահաճ բռնադատութիւնը իրենց խնամքին տակ գրոնդող տղոց համար։ Ու ո՛րքան կառավարիչներ որոնք, իմացած ըլլալով կարգապահութեան ներլուրը, միտքերնուն երբեք չեն անցուցած որ դուն ատկէ տարբե՛ր բոն կրնայիր ըլլալ։

Հակառակ մեթոտը, չփացնող մեթոտը, աւելի չարժեք։ Վերը ըսինք թէ ի՞նչպէս՝ այս ալ՝ կրնար ուսուցանել ստորակայութեան զգացումը։ Դիտենք հոս Տօքթ. Վէքսպէրկի հետ, որ այս երկու մեթոտները — իշխողութիւն և ծայրայեղ հոգածութիւն — թէև իրարու աչքան ներհակ ըստ երեւոյթի, մեծ նմանութիւն կը ներկայացնեն սակայն մանկավարժական տեսուկէտով. հասարակաց թերութիւնը ունին չգարգացնելու մարդկային էակին ինքնաբերութիւնը, խոհական կամքը, ինքնավարութիւնը։ Երկու պարագաներուն ալ, տղան ուրիշ «կախեալ» մը կ'ըլլայ։ Կա՛մ կ'արգիլեն որ դործէ, և կամ իր տեղը կը գործեն։ Բռնութեան առաւելայ, կամ ընդհակառակը առարկայ գուրգուրանքի մը որ կը փութայ ընդառաջ երթալ իր փա-

փառքներուն՝ ամէն խոշընդոտ հեռացնելու յարատեւ մտահոգութեամբ իր ճամբուն վրայէն, տղան առիթը չ'ունենար ինքնիրեն որոշում տալու, կամենալու, մէ'կը ըլլալու: Նոյն տղաւորաութիւնները, ճիշդ նո'յն տղաւորութիւնները (թացի չիտէն որ կրնայ տարբերիլ) կը լսենք դառնաբարոյ մօր և չափազանց գորովալի մօր բերնէն. «Քալած տեղդ նայէ՛, Մի՛ յոգնիր՝ քրտնիր: Պատէն վեր մի՛ մագլցիր: Ջուրին գլուխը մի՛ երթար...»: Անտարակոյս տարբե՛ր գիտաւորութիւններով կ'ըսուէին ասոնք. բայց երկու պարագաներուն ալ մշտնջենական հալածանք մըն են որ միեւնոյն արդիւնքին կը յանգի:

Այս քննադատութիւնը՝ ցոյց տալով մեզի թէ ի՞նչ բան ընելու չենք, ցոյց կուտայ միեւնոյն ատեն թէ ո՞ր ճամբուն հետեւելու ենք խուսափելու համար ստորակայութեան զգացումը աճեցնելէ: Այդ արքայական ճամբան ա'յն է որ անհատականութեան զարգացման կը տանի, նիւթական եւ ընկերային այն պահանջներուն շրջանակին մէջ՝ որոնց ամէն մարդ ենթարկուած է. ա'յն ճամբան՝ որ կը տանի Ալիքսանտր Վինէի կողմէ այնքան լուս սահմանուած իտէալին, «Մարդը տէր ինքզինքին, լաւագո՛յնս ծառան ըլլալու համար ամէնուէն»:

Ուշոր հարց, որովհետեւ դաստիարակին գլխաւոր պարտականութիւնները՝ ստորակայութեան հոգեկնճիւղին առաջքը առնելու խնդրոյն մէջ՝ նոյն այն պարտականութիւններն են, ըստ իս, ինչ որ են ընդհանուր առմամբ դաստիարակութեան մէջ: Ահաւասիկ թէ որո՞նք են այդ պարտականութիւնները. — աշխատութիւնը սիրցնել, դպրոցը իրապէս ընկերային միջավայր մը ընել, նկատի ունենալ տղոց անհատական տարբերութիւնները:

Աշխատութիւնը. այսինքն այն գործունէութիւնը որ նպատակ կ'ունենայ խնդրի մը տիրելու, նիւթական կամ իմացական խնդրի մը: Առկէ աւելի յարմար բան չկայ գիտակցիլ տալու համար տղուն իր անձնական արժանիքին, իր կարողութիւնն, հետեւաբար և գոհացում տալու իւրաքանչիւր մարդու հոգիին մէջ բնակող տիրապետական միտումին: Մէ'կ պայմանաւ սակայն. այն է որ աշխատութիւնը իբր իր եսին իրականացումը երեւայ տղուն: Այս յատկանիշը ունենալու համար՝ աշխատութիւնը պէտք է որ կապուած ըլլայ այն խորունկ ձգտումներէն մէկուն որոնց գոհացումը պահանջք մըն է: Այն ատեն՝ թափուած աշխատութիւնը ինք ալ պահանջք մը կ'ըլլայ, ախոր-

ժամի մը կամ աւելի ճիշդը՝ զայն յագեցնելու միջոց մը. ու անհատին ամբողջ կորուլը զայն կատարելու կը միտի:

Ասոր պատճառը այն է որ սերտ յարաբերութիւն կայ աշխատութեան և եսին միջև: Աշխատութիւնը, ինչպէս նաեւ գիտելիքները, որոնք միջոց մըն են զայն գլուխ հանելու, ուրիշ բան չեն բայց եթէ գործելու համար պէտք եղած գործիքներ. իսկ գործելը ուրիշ բան չէ բայց եթէ հաւաստումը անհատականութեան, անհատին պահանջներուն, իտէպնելուն: Այն մանկավարժութիւնը որ այս գործարանային յարաբերութիւնը կը խզէ, որ աշխատութիւնը իր կենսական կապակցութիւններէն անջատարար նկատի կ'առնէ, առանց գիտնալ ուղելու թէ անիկա կապուած է ունէ կերպով եսին փափաքներուն, թէ կը համապատասխանէ՞ անոր կարողութեանց, այդպիսի մանկավարժութիւն մը կրնայ հետեւեալ երկու ցաւալի հետեւանքները ունենալ. աղան կ'ամ, պարտագրուած աշխատութիւնը բատինքեան նպատակ մը, տեսակ մը կանոնական ստիճան նկատելով, ինչինքն կ'արհամարէ՝ որովհետեւ չի կրնար այդ ստիճանին հասնիլ՝ ու կը սահի դէպի ստորակայութեան զգացում. և կամ, երբ իր եւը գիմադրէ, աշխատութիւնը արհամարել կը սորվի, որովհետեւ իրեն համար անորոշք կը գտնէ զայն: Արդարեւ, — կրկնե՛նք — աշխատութիւնը յայնքան միայն մեր աչքին արժէք կ'ստանայ որքան որ մեր փափաքած մէկ նպատակին հասցնէ: Սպասելով որ մեր շրջափակը միջավայրին տիրենք, կը զօրացնէ մեր մէջ գերակայութեան զգացումը ուրուն այնքան ծարաւի ենք: — Ահա թէ դպրոցականը ինչի՞ դիտակցելու է ամէն բանէ առաջ:

Տղան չ'ատեր աշխատութիւնը, ինչպէս ենթադրել կուտայ աւանդական մանկավարժութիւնը իր պատիժներու և պատժովճիւններու զինամթերքովը: Ծուլութիւնը չափահասին բնական վիճակը ներկայացնէ թիւեւ. տարակոյս չկայ որ տղուն բնական վիճակը չի ներկայացներ: Աչքի առջև բերենք թէ ի՞նչ տնագին գործունէութիւն ցոյց կուտայ մանկիկը, իր առաջին տարիներուն, սորվելու համար բոլոր այն բաները զորս կը սորվի, խօսիլն ալ մէջը ըլլալով: Տղան ներքին գրգռիչ մը ունի ուրեմն, զօրաւոր մղանակներով գործող, որ զինքը կը մղէ իրերը նուաճելու: Դաստիարակին արուեստը կը կայանայ ագուցանելու մէջ այս ինքնաշարժ մեքենային — որ փափաքներ իրականացնելու մեքենայ մըն է — այն ինչ որ ընել տալ

կ'ուզէ իր աշակերտին: Եթէ դաստիարակը յաջողի այսպէս ընել, աշխատութիւն և ուսում միջոց մը պիտի երեւան դպրոցականին աչքին իր փափաքները իրականացնելու. ու սիրէ՛ պիտի զանոնք, որովհետեւ մարդ կը սիրէ ամէն ինչ որ իր մէկ բուռն փափաքին կը հասցնէ: Այս իմաստով է որ սովորութիւն ունիմ յայտարարելու թէ տղան ընելու չէ այն բաները զորս նախ և առաջ ուզած, կամ փափաքած, չըլլայ: Բայց աւելի տգիտութեամբ անշուշտ՝ քան անուղղամտութեամբ՝ ծիծաղելի կը դարձնեն այս բանաձևը, հաւաստելով որ նոր դաստիարակութիւնը տղան կը մղէ ամէն ուղածը ընելու (ինչ որ բոլորովին տարբեր իմաստ ունի): Ըսածս այդ չէ. այլ թէ՛ տղան ինչ որ րնէ, ուղելով րնելու է: Ո՛վ պիտի համարձակէր պնդել թէ եսին կողմէ հաւանութեան արժանացած, որդեգրուած այս աշխատանքը — եսին՝ որ զայն կ'իւրացնէ և հոգիով-մարմնով կ'ընդունի ու անոր — ամէնէն բարձր, ամէնէն վսեմ ձևը չէ դպրոցական աշխատութեան:

Բայց եթէ, ստորակոյտութեան զգացումը արթնցնելու վախով, զգուշանանք ամէն սեղմումէ և բորբոքինք տղուն մէջ իր զօրութեան գիտակցութիւնը, ի՞նչ կ'ըլլայ այն ատեն բարոյական զարգացումը. որովհետեւ բացարձակապէս ազատ ըլլալ բախտը չէ մահկանացուներուն: Իրենց ազատութիւնը շարունակ կը սահմանափակուի ուրիշներու իրաւունքներով: Տեղան պէտք է որ սորվի՛ այս բանը: Այդ, փորձով միայն կրնայ լաւագոյնս սորվիլ: Ահա թէ ինչո՛ւ պէտք է դպրոցական միջավայրը ընկերայնացնել. ըսել կ'ուզեմ թէ դպրոցներուն մէջ պէտք է աւելի՛ ճշմարտապէս ընկերային կեանք մը մտցնել, ո՛չ միայն զբօսանքներու միջոցին, այլ նաև աշխատութեան: Այս ընկերային կեանքը, որ գործակցութիւն և իրեւօգնութիւն կ'ենթադրէ, անհրաժեշտ հակադէմք պիտի կազմէ տիրապետելու ձգտումին: Այդ կեանքէ՛ն պիտի ծնին ամէն մէկ անհատի ուրիշներու հետ յարաբերութեանց կանոնները: Անշուշտ այս ընկերային հարկադրանքները, այս սահմանարկու կանոնները, մեր՝ չափահասներուս՝ տեսակէտով, բռնադատութիւն են: Բայց այնպէս պիտի չերեւան տղուն. որովհետեւ պիտի չի բխին իր կեանքէն դուրս մակարդակէ մը, կանոնադրէ մը կամ վարժապետէ մը որուն հնդինակութիւնը կախուի է վարժատնութեանց և պատիժներու ամբողջ դրութենէ մը: Այդ հարկադրանքները իր վրայ ճշող բռնութիւն պիտի չթուին բնաւ, այլ

կատարելապէս «բնական» հրաւէր մը՝ իր ընդունակութիւնները պատշաճեցնելու հաւաքական կեանքի պահանջներուն: Կանոնը պիտի դադրի՝ տղուն համար՝ պաղ, զեկուցական, հրամայող, դաժան և արտաբոյսակ ըլլալէ, ու պիտի ըլլայ ընտանի և ասքուկ բան մը, որովհետեւ տալրուած՝ պիտի ըլլայ, իր միախնայմէջ արձանագրուած գործելու ձև մը. որովհետեւ տղան զայն պիտի կապէ իր անմիջական կարիքներուն և ընկերային գործակցութեան իր փափաքներուն:

Տեսէ՛ք առաւելութիւնը, մեզ զբաղեցնող տեսակէտէն, այսպէս կազմակերպուած միջավայրին: Ի՞նչ տարբերութիւն աւանդական դպրոցէն ուր գերադոյն արժանիքը կը կայանայ ուրիշները գլխի տնցնելու, առաջին ելլելու մէջ, ուր մրցակցութիւնը վերջին տատիճան կը խթանեն, ինչ որ աղէտալի է քիչ օժտուած աշակերտներուն համար: Երբ դպրոցական միջավայրը ընկերայնացած ըլլայ, ճիգերու ներդաշնակութիւնը կը կազմէ իւրաքանչիւր աշակերտի վարժունքին առանցքը՝ ինքնուրուտ փոքրիկ համայնքին դերագոյն բարւոյն: Իւրաքանչիւր ուր, ըստ պարագայի, համայնքին առաւելագոյն շահը նկատի ունենալով, պարտաւոր կ'ըլլայ իր անձը բոլորանուէր տրամադրել կամ ընդհակառակը ստուերի մէջ մնալ (ինչպէս ֆութպոլի մրցումներուն մէջ՝ ուր խումբին շահը կը մոռցնէ անհատական արժանապատուութիւնները): Խտէլային առանցքը կը տեղափոխուի ինդիւիդուալէս ո՛չ թէ տմէն մէկուն ամէն գնով՝ ի՛ր յաղթանակելուն վրայ է, այլ իւրաքանչիւրին ծառայելուն վրայ՝ իր ունեցած արժանիքներուն համեմատ. ո՛չ թէ տիրապետութեան բնազդին վրայ՝ այլ համեմատելութեան բնազդին վրայ. ո՛չ թէ ուրիշները գլխի տնցնելու՝ այլ փոխադարձ օգնութեան վրայ: Տղաքը փոխանակ զիրար ծաղրելու իրենցմէ՝ մէկուն կամ միւսին ըստ բախտի ունեցած բնածին թերութեանը համար, փոխանակ իրարմէ՝ նախանձելու, զիրար աւտելու, իրարմէ վախնալու կամ զիրար արհամարելու, պիտի սկսին, ընակա՛նօրէն, զիրար հասկնալ ի վերջոյ, զիրար յարգել և զիրար ... սիրել:

Երբ դպրոցական ա՛յս տեսակ դրութիւն մը որդեգրուի, եսին և ընկերութեան հաշտութիւնը, կամ աւելի ճիշդ՝ անոնց երթալով՝ համեմատել գործակցութիւնը գործարանային աճման պաշտօն մը կ'ըլլայ. որովհետեւ տղաքը կաւէ գնտիկներ չեն որ զանոնք կարենանք կաղապարել դուրսէն ճշդումներով: Ապրող

գործարանաւորութիւններն , և՛ իբր այդ՝ կը հակադդեն խիստ բազմաթիւ ձգտումներով զինուած: Ուստի հարկ է այդ ձգտումները ներդաշնակել, խոտորել զանոնք, վսեմացնել: Ա՛յո իմաստով է որ վերը կ'ըսէի թէ դաստիարակութիւնը «կանք մըն է»:

Եւ եթէ դաստիարակը, որուն դերը նաւա՞ղ տկներէ է այս նոր դրութեան մէջ, բայց այդ պատճառաւ իսկ աւելի՛ արթնութիւն կը պահանջէ, և որուն խորհուրդներուն տղաքը աւելի՛ յօժարակամ պիտի դիմեն քանի որ այլևս անիկա իրենց տղու յատուկ կեանքին ընդդիմացող մը պիտի չթուի. եթէ դաստիարակը, կ'ըսէի, գիտնայ ցոյց տալ իր աշակերտներէն քիչ օժտուածներուն թէ ստորակայութեան մը արիւրասար հանդուրժելը գերակայութեանց գերազանցն է յաճախ, ո՞րքան մարդասիրական պիտի ըլլայ իր առաքելութիւնը, և միեւնոյն ատեն օգտակար: Ասիկա անո՞ր համար որ քիչ օժտուած տղաք կան: Կան նաև քաջառողջներ և վատոյժներ, հանդարտաբարոններ և սնհանգարտներ, արագաշարժներ և դանդաղաշարժներ, գործունեաներ և հայեցողներ... Ասոնց սմէնուն ալ ճշգրիտ կերպով նոյն դաստիարակութիւնը կը յարմարի՞, Բացայայտօրէն ո՛չ: Եւ ա՛յդ պատճառաւ կարելորդ է որ դաստիարակը նկատի առնէ տղոց անհատական տարբերութիւնները, տարբերութիւններ զորս կ'անգիտանայ աւանդական մօնկավարժութիւնը՝ լըռելոյսն նախնեթագրելով թէ ո՛ւր է մէկը կրնայ ո՛ւր է բանը: Եւ, կը բաւէ որ կամենայ: Այս անհրաժեշտ անհատականացումը չափով վրայ դաստիարակութիւնը բռնաձեւով ներկայացուցած եմ ատենօք: Անմխտելի է ան ո՛չ միայն երբ իմացական ընդունակութեանց վրայ ըլլայ խնդիրը, այլև, այլ մասնաւոր նկարագրի վրայ: Արդարեւ կայ գ մը աշակերտներ առանց նեղուելու կը հանդուրժեն ամենախիստ կարգապահական դրութեանց, պատիժներու, նուաասացումներու: Ինչպէս եղէ՞ղը հիւսիսակին դէմ՝ կը ճկին ու չեն կտարիր: Զգախտէ ջիղեր ունենային կարծես: Մինչդեռ սերիշներ — անոնք մանաւանդ որոնցմով գրադեցանք հոս — այդ բանը չեն կրնար ընել բնաւ:

Կարելի չէ ուրեմն բոլոր տղոց հետ յարենման ձևով վարուել: Ասիկա դիւրաւ կ'ընդունուի երբ խնդիրը իրենց մարմինին վրայ ըլլայ. աշակերտ մը ցած գրասեղանի վրայ չեն հասեցներ, վախճալով որ կռնակը ձեւէ կ'ելլէ. ո՛չ ոք զինքը կ'ատիպէ ոտքը ցաւցնող կօշիկ հագնիլ պատրուակելով որ նոյն թիւը չատլաւ կը յարմարի իր ընկերներուն՝ Պօղոսին, Պետ-

րոտին և Յովհաննէսին: Բայց, չեմ գիտեր թէ ինչո՞ւ, խնդիրը ուղեղին դառնա՞նք պէս, «պատրաստ» ի կը դիմեն՝ որ ամէն մարդու յարմար կը նկատուի և ոչ ոքի կը յարմարի սակայն: — Իբր թէ անհատները իրարմէ նկատադրով և միտքով շատ աւելի չտարբերէին քան հասակով և ոտքերու մեծութեամբ, եւ հոգին կլիրաւորելը մարմինը կլիրաւորելէն շատ աւելի կարեւոր բան մը չըլլար: Դաստիարակը պիտի չջանայ ուրեմն իր բոլոր աշակերտները նոյն կաղապարին մէջ ձուլել: Ամէնքը նոյն կանգունով պիտի չչափէ: Անհունորէն փափուկ դործ, որովհետեւ եթէ անհրաժեշտ ճարտարութեամբ չկատարուի՝ կրնայ անարդարութիւն թուիլ: Բայց իրական անարդարութիւնը այն ընթացիկ վերաբերումը չէ՞ միթէ որ տարբեր կարողութիւններէ յարեանման արդիւնք կը սրահանջէ:

Ինչպէս կը տեսնուի՝ ստորակայութեան դէմ կանխազգուշութեան համար — ինչպէս արդէն դաստիարակութեան ամբողջ արուեստին համար — առաջին բանը դաստիարակին դաստիարակութիւնն է: Դաստիարակը խորապէս համոզուած ըլլալու է որ իր խառնուածքէն տարբեր խառնուածքներ կան, որ միտքի ձևերը բազմազան են: Դաստիարակը թող սորվի — եթէ բնականէն չունի այդ առաքինութիւնը — տղուն մակարդակին յարմարիլ, անոր ներկայանալ ո՛չ իբր հոկոսակորդ, այլ իբր խորհրդատու, իբր բարեկամ: Գերակայ թող երեւայ տղուն՝ ո՛չ իր սփռած երկիւղով, այլ իր յատկատեսութեամբ, իր հասկացողութեամբ, իր բարութեամբ: Ան ատեն, բարձրագիւր օրինակը պիտի ըլլայ որ կը բարձրացնէ և կը կազդուրէ, ո՛չ թէ բռնապետը որ կը խոնարհեցնէ և կը նուաստացնէ: Տղայ մը «կլթել», զայն նուաստացնել ըլլալու չէ երբեք:

բ. Իսկ երբ ստորակայութեան պարագայի առջև գտնուինք որ իր աւերները կը գործէ, ի՞նչ ընելու ենք:

Ամէն բանէ առաջ — ստորակայութիւնը ի՞նչ ձևի տակ ալ մտնէ ինքզինքը — երկչոտութեան, ծուլութեան, կատաղութեան նուազներու կամ քմահաճ «առասպելայինութիւն»ներու — չյանդիմանել տղան: Ասիկա ըսել չէ՞ թէ յանդիմանութիւնը, իր տարրական ձևով, չի յաջողիր երբեմն արգիլել եպերելի համարուած կարգ մը ընթացքներ. բայց ասիկա դարմանում մըն է որ չի դադրիր ախտանիշ մը ըլլալէ, չարիքին մինչև արմատը չ'երթար: Եթէ դաստիարակը նկատի ունենանք՝ յանդիմա-

նութիւնը պարտկիչ միջոց մըն է պարզապէս, և պարտկիչ միջոցներու գլխաւոր թերութիւնը ունի. այնպէս կործել կուտայ որ դարմանուած է չարիքը, մինչդեռ առկայծ կը մնայ մոխիրին տակ և իսկ եթէ տղան նկատի ունենանք, անոր վիճակը ծանրացնել տարբեր բանի չի ծառայեր. Ուրիմն, պէտք չէ յանդիմանել ստորակայութենէ տառապող տղան, և պէտք չէ մոռնալ որ իր գործելու կնքով մեծ մասամբ անդրադարձ է, մեքենական, անդիտակից և թէ իր վերաբերումը — ո՛րքան ալ անհաճոյ թուի ան — նկատի առնենք ո՛չ այնքան ինքնին՝ որքան իբր յայտարար նշան ենթակային տառապանքին, այն տեսն՝ ո՛ր աատիճան՝ փոխանակ տառապումն պէս հակակրկի ըլլալու, համակրելի՛ պիտի երևայ մեղի. համակրելի՛ ամէն դժբախտ անհատի պէս, զո՛ւ ժառանգականութեան դիպումաներուն և կամ այն միջավայրին ուր ճակատագիրը դրամ է զինքը:

Հեռու չարչրկելէ ստորակայութենէ տառապող տղան, պէտք է սրտապնդել զայն և Անհրաժեշտ է՝ ամէն կարելի միջոցներով՝ վստահութիւն ներշնչել ինքչինքին վրայ, յաջողութեան առիթներ ընծայել իրեն և Գրեթէ չկայ տղայ մը որ ո՛րքան ալ անժառանգ, ռեէ պղտիկ ընդունակութիւն մը չունենայ, և իր դիրքը վերականգնելու համար կարելի չըլլայ այդ ընդունակութիւնը օգտագործել իբր կռուան և Մանկավարժին արուեստը պիտի կայանայ տղուն այդ ամուր կողմը — տկարութեան իր զրահին այդ խոցիկ կէտը՝ պիտի բէի — գտնելու մէջ և օգտագործելու զայն: Այսպէս, անգամ մը պատահեցաւ որ անդրադառնան թէ անխելք տղայ մը — դատարանին յետինը, ձեռնուած շունի պէս կեանքը ստուերի մէջ քաշքշող — սրինգ նուագելու քիչ շատ յարմարութիւն ունի: Պաշտօններն, և շատ չանցած ինքը եղաւ պոռոյտներու առին ընկերներուն մէջ զուարթութիւն սփռող: Առցով՝ իր բարոյական կացութիւնը այլախոխութեամբ. փրկուած էր:

Շատ յաճախ ստորակայութեան զգացումը աւելան չ'ըլլար, մէ՛կը պատճառ եղած կ'ըլլայ անոր. հո՛յրը, օրինակի համար, կամ այսինչ ուսուցիչը, կամ այնինչ ընկերը (միտքերն իդրերէք Տօքթ. Շէլլորուբի հաւերը): Այս պարագային պէտք է տղուն միջավայրը փոխել. ընտանիքէն հեռացնել, ուրիշ դատարան մը դնել և Այն տեսն՝ կերպարանափոխ կ'ըլլայ կարծես հրաշիւք իմն:

Բայց ի՞նչ որ ալ ընելու ըլլամք, կարևորը այն է մանա-

ւանդ որ տղուն հետ համակրանքով վարուինք. սիրով նոյնիակ: Սէ՛րը. քարերուս և տաքուկ մթնոլորտ՝ որո՛ւն մէջ Ռնութիւնը ուզած է որ ապրի մարդը իր մանկութեան քաղցրիկ տարիներուն: Սէ՛րը. բնական հակակշիռ տկարութեան զգացումին զոր պղտիկը կ'ունենայ իրմէ մեծերուն ներկայութեան: Սէ՛րը. յատուկ գեղթափ ստորակայութեան հոգեկնճիւղին: Ու ո՛չ միայն այն սէրը որուն առարկայ կ'ըլլայ մարդ, այլ նաև այն սէրը զոր ի՛նք կը չռայի: Տղան սիրուելու համար չէ եղած միայն, այլ սիրելու համար ալ. որովհետև սիրելը՝ տղուն համար՝ արտասովորուի է (1), ընկերայնօրէն իրականանալ է, ուրիշներու կարգին իր տեղը գրաւել, ինքզինքը անոնց հետ հասմերաշխութեան կապերով կապուած գտալ է: Սիրելը՝ իրեն համար միակ' միջոցն է իրմէ գերականներուն հաղորդակից ըլլալու իբր կատարելապէս հաւասարէ հաւասար. որովհետև զիրար սիրող երկու էակներու միջև գերիշխանութեան խնդիր չ'ըլլար, ընդհակառակը անոնցմէ իւրաքանչիւրը կը փոփոքի դիմացինի՛ն առաջնութիւն տալ: Սէրը հրաշագործ զօրութիւնը ունի լռեցնելու նախանձի ամէն հակամիտութիւն, ապրի՛լ տալու մարդուս՝ քիչ մը՝ ուրիշին երջանկութեամբը: — Տղան չսիրել՝ մերժել է իր մեզի երկարած ձեռքը, հրել, նետել է զինքը կեանքի ստորին խաւերուն մէջ ուր գտնուի ա՛յնքան տառապալի է իրեն համար, որովհետև ստորակայութեան տանջանքին կը հանդիպի հոն:

Տղան սիրել՝ սկիզբն ու վերջն է դաստիարակութեան արուեստին: Բայց կատարելապէս սիրելու համար, սիրելու համար հոկառա՛կ իր թերութեանց, պէտք է զինքը հոսկնալ. իսկ հասկնալու համար, պէտք է ճանչնալ: Անհրաժեշտ է ուրեմն որ դաստիարակը ճանչնա՛յ տղան՝ որպէսզի կարենայ, առաջնց վերապահութեան, սիրել զայն:

(1) S'extérioriser : Արտափոխիլ նախընտրելի երևաց ինծի՝ յաճախ գործածուած դրսեւորիլէն: Արտափոխիլ աւելի կոկիկ պիտի ըլլար, եթէ խոնարհութի ատեն անպատեհութիւններ չներկայացնէր: Ծ. Թ.



[illegible]

1853

De l'Éducation des Éléments de la Philosophie

[illegible]

3 - 1. Teil: die Bedeutung des Erbes für die Entwicklung der Menschheit.

00482494 2240345

အသံကဲ့သို့၊ ကျစ်လျစ်စွာ ဖြည့်ဆည်းထားသည်။

1. 1. 1.


ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



220041767

(504.)

huyf



Թարգմանողին

ԳՈՐԾԵՐԸ

- 1 - De l'Efficacité de l'Exemple. Nécessité d'une Science des Parents. *Vrin, Paris.*
- 2 - Frœbel devant la Pédagogie Scientifique. *Guebenlian, Nicosie, Chypre.*
- 3 - L'Emile de Rousseau & l'Emile des Ecoles Normales. *Actualités Pédagogiques & Psychologiques. Delachaux et Niestlé. Neuchâtel et Paris.*

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հրատարակութիւն և տպագրութիւն Հայ Դպրոցի, Գընէէն-ժընէվ, Զուիցերիա

- | | |
|-----------------------------|---------------------------|
| 1. Զափու Վրայ Դպրոց | Էտուառ Քլափաուէ |
| 2. Մանկավարժը Զի Սիրէր Տղան | Հանրի Ռոօրսա (Սպասած) |
| 3. Կռուի Բնագիրը | Բիէր Պօլէ |
| 4. Տուն և Աւերան | Ռապիներանս Թակօր (Սպասած) |

Դին 3 շիւիհ